

Բաբերդի 1903, ՏԲ. 1906, ՏԴ. Բ. անգամ 1910-17, կը վախճանի Դամասկոսի մէջ 1917ին:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ ԳԼԼԸՃԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՅԻ.—Մբ. Մշոյ Ս. Կարապետի, 1867ին, կը տարագրուի Ս. Յակոբի վանքը և 1868ին, կը մեկնի ներուժով Պոլիս. (Սոսն 1867 էջ 14):

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ՍԵՒԵՐԵԿՅԻ, Մբ.—Ձու. 1835ին?, խոստ., երկու անգամ կը ճամբորդէ Եգիպտոս. ՏՅ. 1842ին, պաշտօնով Յոպպէ 1843ին: Իր անձնական մի քանի նամակներուն ընդօրինակութիւնը տեսնել (Վրբ. ՄՁ. անթիւ):

ԱՐԻՍ ՖԷՍՃԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ.—Գործակատար Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին, իբր քննիչ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1906ին, Մանկունի վահրամ արքեպիսկոպոսի հետ:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ.—Ծ. 1872ին Պէշիկթաշի մէջ շրջանաւարտ Կեդր. Վարժ.ի 1889ին, կ'այցելէ Փարիզ 1893ին. 1894ին ուսուցիչ Պատմութեան Կեդր. Վարժ.ի մէջ. դարձեալ Փարիզ կը մեկնի 1895ին, հրատարակած է 1898է սկսեալ Անանիոս պարբերականը, և ուրիշ գիրքեր, աշխատած է Ֆրանսայի ծանօթացնել հայ մշակոյթը: 1920ին, Ազգ. Պատուիրակութեան կողմէն, Պէշուրէ զրկուած է Ֆրանսայի բարձր Գօմիսէրին մօտ, Կիլիկիոյ Հայոց այլևայլ գործերու կարգադրութեան համար, 1921ին այցելած է Ս. Յակոբի վանքը, ուր պատրիարքական նոր ընտրութեան պայմաններուն և ընտրելեաց մասին անպաշտօն խորհրդակցութիւններ կատարած է Միարանութեան անդամոց հետ և ջանացած է մղում տալ կատարելու պտրք. ընտրութիւնը յօգուտ Ս. Սթոռոյ. 1921 ապրիլ 18ին, պատրիարքարանի գահլիճին մէջ, արտասանած է ֆրանսերէն բանախօսութիւն մը, Հայոց Միջնադարէն Բանաստեղծութեան վրայ, ի ներկայութեան հրաւիրեալ պետական անձնաւորութիւններու, հիւպատոսներու, օտար միարանութեանց ներկայացուցիչներուն: Ս. Յակոբի ձեռագրաց թանգարանին մէջ կատարած է ուսումնասիրութիւններ: Յամեայ գրական բեղուն գործունէութեան Յորդիանը կատարուած է Փարիզի մէջ 1925 յունուար Յին: Ունի բազմաթիւ հրատարակութիւններ:

ԱՐՄԷՆ ԱՖ., Մբ.—Կը յիշատակուի Ամզեցի Մինաս պտրքի Օրագրութեան մեջ, Մալքի և Աորեմ Մբ. արեղաներու հետ: